

ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ, 68-րդ, և 94-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի թիվ 202-Ն, 2011 թվականի ապրիլի 14-ի թիվ 387-Ն, 2011 թվականի հուլիսի 28-ի թիվ 1058-Ն, 2004 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1844-Ն, 2010 թվականի ապրիլի 1-ի թիվ 445-Ն, 2012 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1507-Ն որոշումների և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1110-Ն հրամանի պահանջները

կարգադրում եմ՝

1. Մարզի առողջապահական ընկերությունների տնօրեններին՝ մարզպետարանի աշխատակազմ ներկայացնել.
- 1) մինչև 2013 թվականի փետրվարի 1-ը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի թիվ 1058-Ն որոշմամբ հաստատված ընկերության 2012 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության մասին հաշվետվությունը՝ փաստաթղթային և էլեկտրոնային ձևով, իսկ եռամսյակային հաշվետվություններ՝ եռամսյակի ավարտին հաջորդող առաջին ամսվա մինչև 10-ը
- 2) մինչև 2013 թվականի մարտի 1-ը՝ 2013 թվականի ֆինանսական եկամուտների և ծախսերի նախահաշիվը և հաստիքացուցակը՝ 2 օրինակից.
- 3) մինչև 2013 թվականի ապրիլի 15-ը՝ 2012 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվության 1. 2. ձևերը, զուտ շահույթի բաշխման ուղղությունները.
- 4) ծախսման նախահաշիվը, պետական բաժնեմասի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե շահաբաժնի վճարման առաջարկվող չափի վերաբերյալ առաջարկությունը և հաշվարկը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի թիվ 202-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թ. նոյեմբերի 30-ի թիվ 1110-Ն հրամանով հաստատված ձևերին համապատասխան, ինչպես նաև շահութահարկի պարզեցված հաշվարկի օրինակը՝ հաստատված տարածքային հարկային տեսչության կողմից, տնտեսագիտական դասակարգման՝ 2011 թվականի փաստացի և 2012 թվականին՝ նախահաշվով նախատեսված և փաստացի կատարված եկամուտների ու ծախսերի մասին տեղեկանքը (համաձայն կից ձևաչափի), ինչպես նաև 2012 թվականի տարեկան ճշգրտված ֆինանսատնտեսական մոնիտորինգի տվյալները /ՖՏՄ 1.2.4.7 և հավելված 3.4.5.6 ձևերով/՝ 2 օրինակից:

2. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը /Ա. Մելքոնյան/ և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը /Ա. Սահակյան/ ապահովել.
 - 1) առողջապահական ընկերությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների, ֆինանսական եկամուտների և ծախսերի նախահաշիվների, հաստիքացուցակների ու այլ փաստաթղթերի ընդունումը, վերլուծումը և ներկայացումը մարզպետի հաստատմանը.
 - 2) սահմանված կարգով և նախատեսված ժամկետներում ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, իսկ ֆինանսատնտեսական մոնիտորինգի ձևերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն.
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Հակոբյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ

Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ